ՄԱՅՐ ԱԹՈՌ

Անցեալ օգոստոս ամսի 10 ին, Շուշեցի Հայկ Թէոդորոսեան Եարամիշեանը, դիմելով Ն. Սրբութեան խնդրել էր հաճել ընդունել իրեն Մ. Աթոռի միաբանների շարքը։ Ն. Վեհափառութիւնն ի նկատի ունենալով նորա պատրաստակամութիւնը, ինչպէս և նորա պատրաստութիւնը, իբրև Խարկովի համալսարանի պատմա-լեզուաբանական մասնաճիւղի շրջանաւարտ, բարեհաճեց ընդունել նորան ի շարս միաբանների Մ. Աթոռիս, և պատուիրեց կուսակրօն սարկաւագութեան աստիճան տալ նորան, Տ. Մատթէոս եպիսկոպոսի ձեռքով, օգոստոս 29-ին։

* * *

Ճեմարանի մի տարով, ծանր պարագաների բերմամբ, ընդհատուած կեանքը վերակուսեցաւ օգոստոսի 21-ից։

Նորեկների ընդունելութիւնը, ըստ կանխագոյն յայտարարութեան Ճեմարանի Վարչութեան պէտք է լինէր շատ սահմանափակ և որոշ դասարանների համար. սակայն և այնպէս մեծ քանակութեամբ նոր ընդունուելու ցանկութիւն ունեցողներ էին ներկայացել քննութեան, որոնցից լաւագոյնները քննութեան արդիւնքով ընդունուեցան Ճեմարան։

Ունենալով Ճեմարանի տարեկան ել և մուտքի չափազանց բարդուելուն, (այս տարի ըստ նախնական հաշուի հասնում է 98,420 ռ.), այնուամենայնիւ որոշուած քանակից աւելի ընդունուեցան Ճեմարանում, որովհետև դժուար էր փակել ուսումնածարաւ մանուկների առաջ կրթական մեծ հաստատութեան դռները։ Եւ թէ Ճեմարանի Վարչութեան և թէ Մայր Աթոռի Ղեկավարողը սիրով ընդ առաջ գնացին այդ պահանջին, յուսալով հասարակական լայն օժանդակութեան վրայ։

Այս տարի ընդունուել ցանկացողների մէջ ճնշող մեծամասնութիւնը պատկանում էր գաղթականներին, որոնցից շատ-շատերը հասակի մեծութեան, առողջական վիճակի անհամապատասխան լինելու, անպատրաստութեան համար մերժուեցան, սակայն և այնպէս նոյն իսկ նոր ընդունուողների մէջ մեծամասնութիւնը, ըստ տոկոսի, կազմում են Տաճկական Հայաստանից գաղթած փոքրները։

Այս տարի ճեմարանի մէջ ընդունուած է ընդամենը 84 հոգի, որոնցից

Ա. դասարան	—	41	հոգի
Բ. »	—	10	»
Գ. »	—	2	»
Դ. »	—	2	»
Զ. »	—	9	»
Ա. լսարան	—	20	»

Սոցանից 23 հոգի Տաճկաստանի զանազան վայրերից, այն է 29% բոլոր ընդունուողներից, որոնցից Վանեցիներ 12 հոգի և մնացածները Տաճկաստանի զանազան վայրերից։

Նոր ընդունուածներից գիշերօթիկ են 80 հոգի և երթևեկ 4 հոգի, թոշակաւորներ 42 և ձրիավարժ, ի հաշիւ Մ. Աթոռի, 42 հոգի։

* * *

Մ. Աթոռի ճեմարանի վարչութիւնն ի նկատի ունենալով կեանքի այժմեան պայմանների անհանդուրժելի ազութիւնը, որոշել էր նախկին տարիների թոշակի քանակը, 200 ռ. դարձնել 250 ռուբլի։ Թէև այժմեան պայմաններում նոյն իսկ այդ թոշակով ոչ մի դպրոց չէր կարող պահպանել աշակերտ իւր բոլոր դպրոցական հոգացողութիւններով, սակայն վարչութիւնը կամեցել էր ընդառաջ գնալ հայութեան ոչ-հարուստ դասակարգին և դիւրութիւն տալ նոցա, որպէսզի կարող են փոքր թոշակով իրենց զաւակների կրթութիւնը հոգալ՝ ուղարկելով նոցա ճեմարան և վարչութեան այս հոգատար ընդառաջումը

ունեցաւ իւր բարի հետևանքները և այս տարի նոր ընդունողների մէջ թոշակաւորների տոկոսը հասաւ 50-ի։— Նոր ընդունողների ծնողներից ոմանք ընդ առաջ գնալով ճեմարանի վարչութեան, ինքնաբերաբար առաջարկեցին 300 ռ. թոշակ, փոխանակ վարչութեան որոշած 250 ռուբլու, կեանքի այժմեան պայմաններն ի նկատի առնելով։

Ս. Էջմիածնի Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Ցանձնաժողովը, որ ի մօտոյ տեսնում է Տաճկահայ ուսումնաձարաւ փոքրերի տենչը, ինչ գնով և լինի, հասնել կրթութեան, ընդ առաջ գնաց այդ պահանջին և իւր սեպտ. 21-ի նիստի մէջ որոշեց պահպանել ճեմարանի մէջ նոր ընդունուած Տաճկահայ սաներից 20 հոգի, իւր հաշուով, վճարելով իւրաքանչիւրի համար տարեկան 300 ռուբլի և այժմենից մտցնելով ճեմարանի գանձարկղը 6000 ռուբլի։

Եղբ. Օգնութեան այս բարի ձեռնարկը մի գեղեցիկ օրինակ պիտի լինի մեր միւս բոլոր հաստատութիւնների, ընկերութիւնների և անհատների համար, որոնց սրտին մօտ է ճեմարանի բարգաւաճման խնդիրը, որտեղ այս րոպէիս ուսանում են նախորդ տարիներից բազմաթիւ Տաճկահայ խեղճ տղաներ, որոնց ուսման և ապրուստի բոլոր հոգսը ծանրացած է Մ. Աթոռի վերայ,—իրենք ևս, ինքնաբերաբար, ընդ առաջ գնան ճեմարանի Վարչութեան և հատուցանեն որոշ քանակի թոշակ, իրենց հաշուով պահպանելու մի քանի աշակերտ, լինի դա Տաճկահայ պատանիներից, թէ Ռուսահայ փոքրներից։

Այսպիսի ծանր տարիների մէջ Հայ ամբողջ հասարակութեան վերայ բարոյական մեծ պարտիք կայ ըստ ամենայնի թեթևացնելու Մ. Աթոռի բարոյական պարտաւորութիւնների անթերի կատարումն դէպի իւր ուսումնատենչ զաւակները։ Մ. Աթոռը իւր սուղ միջոցներից հարիւր հազար ռուբլի է դնում իւր հովանու տակ պատսպարուած դպրոցի պահպանութեան համար, որ անշուշտ աւելի ևս մեծ գումարի պիտի հասնէ տարուայ վերջը։ Հերթը եկել է մեր ժողովրդին, նորա բոլոր խա-

ներին, օգնութեան գալ Մ. Աթոռին այսպիսի ծանր պայմանների մէջ։

* *
*

Օգոստոսի 28-ին լրացաւ Ազգիս Վեհ. Հայրապետի ծննդեան 69-ամեակը և Ն. Վեհափառութիւնը թեւակոխեց Իւր 70-ամեակը։

Ն. Սրբութիւնն այդ առթիւ չընդունեց ոչ մի պաշտօնական շնորհաւորութիւն, բացի միաբանական որդիական արտայայտութիւն զգացումներից, որով ցանկացան Ն. Սրբութեան ընդ երկար մնալ բազմաց Ս. Լուսաւորչի Գահի վերայ, գործադրելու Իւր բոլոր ոյժերը յօգուտ Հայ Եկեղեցու բարգաւաճման, որին Հայրապետ է կոչուած։

* *
*

Սեպտ. 2-ին Մ. Աթոռի միաբան շնորհ. Հայկ սարկաւագ Եարամիշեան, Վեհ. Հայրապետի հրամանով նշանակուեցաւ օգնական-մատենադարանապետի Մ. Աթոռոյս։

Վեհ. Հայրապետի հրամանով նշանակուեցաւ նա Ս. Էջմիածնի Ուսումն. Յանձնաժողովի անդամ։

* *
*

Մ. Աթոռի ձեռագրանի Վարչութիւնը հրաւիրեց ստանձնելու շնորհ. Հայկ սարկ. Եարամիշեանին Ռուսաց լեզուի, պատմութեան, գրականութեան և Յունարէնի դասերը, տարուայ սկզբից անակնկալ կերպով իւր պաշտօնը թողած և հեռացած ուսուցիչ պ. Մակինցեանի և հիւանդութեան պատճառով իւր դասերն ստանձնելու հնարաւորութիւնից զրկուած պ. Ս. Դօլգեանի փոխարէն։

* *
*

Սեպտ. 5-ին Մ. Աթոռ ժամանեց Պետական Դումայի անդամ Վլադիմիր Ալէքսէևիչ Ռժեւսկիյ, ուղեկցութեամբ Երկրագործութեան Նախարարութեան առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ և Կովկասեան արտադրութեանց Յանձնաժողովի գործադիր-անդամ, գիւղատնտես Յարութիւն Ստեփ. Փիրալեանի։

Հիւրերն արժանացան Ն. Վեհափառութեան առանձին ունկնդրութեան, մօտ մի ժամի չափ։ Պ. Ռժեւսկուն առանձնապէս հետաքրքրում էր մօտ ապագայում Կովկասում մտցնուելիք զեմստվոյի խնդիրը և նա շատ գոհ մնաց Ն. Սրբութեան տեսակէտը լսելով իրեն հետաքրքրող խնդիրների նկատմամբ։

Ապա հիւրերը հ. Դիւանապետի առաջնորդութեամբ մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Մ. Տաճարը, իբրև հնութիւն և իբրև ճարտարապետութեան արդիւնք, մատենադարանը՝ իւր Ձեռագիրների բաժնով, որ առանձին հետաքրքրութիւն և բաւականութիւն պատճառեց պ. Ռժեւսկուն։ Հետաքրքրական էր դիտել, թէ ինչպիսի կենդանի հետաքրքրութեամբ, Պուլ'կովի դիտարանի նախկին տեսուչը, մանրամասն հարցեր էր առաջարկում իւր առաջ դարերի շարքով դասաւած օտար արուեստի և դպրութեան արդիւնք Ձեռագրների մասին և ինչպիսի գոհունակութեամբ էր փայլում նորա դէմքը հ. Գարեգնի տուած բացատրութիւններով։ Ապա դիտեցին Ճեմարանը և յարակից շէնքերը, Որբանոցը, ուր հիւրերը մանրամասն հարց ու փորձ արին նոցա կենցաղի մասին և գոհ սրտով հեռացան։

Մ. Աթոռի կողմից հիւրերին ցոյց տրուեցաւ հիւրասիրութիւն։ Ճաշին ներկայ էին Տ. Մատթէոս եպիսկոպոս, Տ. Տիրայր ծ. վարդապետ, Տ. Գարեգին ծ. վարդապետ, Տ. Գէորգ վարդապետ, շնորհ. Հայկ սարկաւագ Եարամիշեան։

Երեկոյեան 5½ ժամին հիւրերը գոհ սրտով հեռացան Մ. Աթոռից, տանելով իրենց հետ լաւագոյն տպաւորութիւններ։

* * *

Սեպտ. 14-ին Մ. Աթոռ ժամանեց Երևանից պ. Տիգրան Նազարեանը, որին Ն. Սրբութիւնը բարեհաճեց առանձին ունկնդրութիւն շնորհել։

Պ. Նազարեան առաքելութիւն ունէր Աղէքսանդրոպոլի, Երևանի և Էջմիածնի շրջաններից մեծաքանակ որբեր ժո-

զովել և տեղափոխել Ղարաբաղ, այնտեղ նոցա համար կարևոր ապաստարաններ հիմնելով, ինչպէս Շուշի քաղաքում, նոյնպէս և Ղարաբաղի թեմերի վանքերում։ Այս նպատակով նա սեպտեմբերի սկզբին գնացել էր, առանձին յանձնարարութեամբ, Շուշի՝ տեղական մարմինների հետ խորհրդակցելու և գործը կազմակերպելու։ Խորհրդակցութեան հետևանքն էր եղած մի նոր մարմնի կազմութիւնը, որի գլուխ և պատուաւոր նախագահն է Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչ Տ. Վահան ծ. վարդապետը, իսկ անդամները տեղական մտաւորական և այլ ոյժերը։

Որբերի ապաստարանում ընդհանուր առմամբ ենթադրւում է տեղաւորել մօտ 2000 որբ, որոնց պահպանութեան ամբողջ հոգացողութեան խնամքը յանձնարարուած է պ. Նազարեանին, գաղթականների պարենաւորման ընդհանուր ղեկավար գեն.-մայ. Թամամշեանի կողմից։

Որբերն արդէն փոխադրւում են երկաթուղով մինչև Ելախ կայարանն, իսկ այդ տեղից պ. Նազարեանի օգնական Մովսէս-բէկ Իւզբաշեանի խնամքով կառքերով մինչև Շուշի և կամ իրենց ապաստարանների վայրերը։

Պ. Նազարեանը ամսոյս 15-ին, ստանալով Ն. Սրբութեան օրհնութիւնը իւր սկսած գործի համար, մեկնեց Տփխիս։

* * *

Սեպտ. 20 ին Մ. Աթոռ ժամանեցին Պետրոգրադի Ամերիկական դեսպանատան խորհրդատու միսսիան էրէսէ, Ամերիկական Հայանպաստ Ցանձնաժողովի անդամներ մ-ր Եարով, պատուելի Ֆ. Մրկ-Ալլըմ, դ-ր Ռայնոլդս, մ-ր Մէյնարդ, որոնք նոյն օրն իսկ մեկնեցին Իգդիր գաղթականական գործերի և գաղթականների դրութեան ի մօտոյ ծանօթանալու։

Երեկոյեան դէմ վերադառնալով Իգդիրից Մ. Աթոռ բաղդունեցան ներկայանալու Ն. Ս. Օծութեան և շահեկան տեղեկութիւններ հաղորդել Վ.Եհ. Հայրապետին և ստանալ։

Հիւրերը մնացին Ն. Վ.Եհսիսութեան մօտ 3/4 ժամ և հեռացան գոհ սրտով և տպաւորութեամբ։

* * *

Սեպտ. 20-ին Մ. Աթոռ ժամանեցին Կայսերական Հնագիտական Ինստիտուտի իսկական անդամ և Պետական խնայողական գանձարանների վարչության քննիչ Իւան Պաւլովիչ Իւվաչեվ, Պետական խնայող գանձարանների վարչության քննիչ Վիկտոր Ալէքսանդրովիչ Սիմանովսկիյ, Երևանի Պետական Դրամատան բաժնի ժամ.-կառավարիչ Եակով Միլվանովիչ Ռուդենկո, իրենց օգնականներով, որոնք արժանացան Ն. Սրբության առանձին ունկնդրության։

Հիւրերը միառմի դիտեցին Մ. Աթոռի արժանաւոր հնութիւնները, վայրերը և Աթոռի հիւրասիրությունը վայելելով մեկնեցին Երևան։

* *
*

Սեպտ. 23-ին, երեկոյեան, Ն. Վեհափառությունը բարեհաճեց Մ. Տաճար իջնել և ներկայ լինել իւր Անուանակոչության նախատօնակին։

Վեհ. Հայրապետը այս տարի չհաճեցաւ ընդունուած հանդիսաւոր թափորով իջնել ի Տաճար, ըստ նախաւանդ սովորության, այլ բաւականացաւ սովորականի պէս՝ առանց շուքի իջնել, ի նկատի ունենալով իւր հօտի տառապանքի և վշտակրության օրերը։ Ն. Սրբության Տաճար էին առաջնորդում եպիսկոսական դասը և միաբանության անդամները։

Դուրսը խռնուած բազմությունը խոնարհում էր աջ և ձախ օրհնություն առաքող Հովուապետի առաջ։

* *
*

Սեպտ. 24-ին. Ն. Ս. Օծության անուանակոչության և Մ. Աթոռի Հոգևոր «Գէորգեան» ճեմարանի Քառասուն և երկրորդ տարեդարձի առթիւ հանդիսաւոր պատարագ էր Մ. Տաճարում։ Պատարագիչն էր Տ. Յուսիկ արքեպիսկոպոս։

Ն. Վեհափառությունն, ըստ նախաւանդ սովորության, իւր Անուանակոչության Տօնի առթիւ, պաշտօնական ընդունելություն չունէր, իբր վշտակիր Հայը իւր հօտի։

Պատարագին Ն. Սրբութիւնը Մ. Տաճար իջաւ եպիսկոպոսական դասի առաջնորդութեամբ։ Ըստ սովորականին, Պատարագից յետոյ իջման Ս. Սեղանի առաջ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, որից յետոյ միաբանական ուխտը մօտեցաւ Հայրապետի աջն առնելու և այնտեղ իրենց շնորհաւորութիւնները մատուցանելու լռելեայն։ Միաբանական ուխտից յետոյ Հայրապետի աջն առնելու մօտեցան Ճեմարանի աշակերտութիւնը, չոքելով և Գահ բազմած Հայրապետի ս. աջը և խաչը համբուրելով։

* *
*

Պատարագից յետոյ Հոգևոր Ճեմարանի երջանկայիշատակ հիմնադրի, Տ. Գէորգ Դ. կաթողիկոսի, գերեզմանի օրհնութիւնը կատարուեցաւ, ըստ աւանդական սովորութեան։

Երգչական խումբը, հանգուցեան շարականի երգակցութեամբ, ամբողջ միաբանական ուխտը, Ս. Հայրապետի գլխաւորութեամբ, ելնելով Մ. Տաճարից, բոլորեց հայութեան լուսաւոր կենտրոնի կանգնողի ծաղիկներով զարդարուած շիրմի շուրջը, իսկ ուխտաւորների, ժողովրդի և մօտաւոր գիւղերից բազմամբոխ եկուորների լայն շարքերը բռնել էին Տաճարի հիւսիսային բաժինը։

Հոգեհանգստեան կարգը կատարելուց յետոյ միաբանութիւնը առաջնորդեց Հոգևոր Տիրոջը Վեհարան։

* *
*

Չնայելով որ պաշտօնական ընդունելութիւն չկար, սակայն և այնպէս Երևանից եկած պատգամաւորներին Ն. Սրբութիւնը հաճեցաւ ընդունել։

Ներկայացան Փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս, քաղաքապետ Սամսոն Խաչատրեան, փաստաբաններ Գրիգոր Տ. Խաչատրեան, Լևոն Մուշեղեան, և Գրիգոր Պետրոսեան, պ. պ. Վասիլ Եղիազարեան, Յովհաննէս Մելիքեան և։

Ն. Վեհափառութեան անուանակոչութիւնը շնորհաւորելու համար Տփխիսի Երաժշտական Ընկերութիւնը ուղարկել էր առանձին պատգամաւոր, յանձին իւր ան-

դամ-գանձապահի՝ Տիկ. Նունէ Դօլուխանեանի, որ ներկայանալով Ն. Սրբութեան շնորհաւորեց Երաժշտական Ընկերութեան և իւր կողմից։

* *
*

Ճեմարանի ուսուցչական կազմը, հ. Տեսչի գլխաւորութեամբ, բաղդ ունեցաւ ներկայանալ Ն. Սրբութեան և շնորհաւորել նորին Վեհափառութեան անուանակոչութիւնը։

Տեսուչ, հ. Գաբրիէլ ծ. վարդապետը, ներկայացրեց մէկ-մէկ բոլոր ուսուցիչներին և ամենքի կողմից շնորհաւորելով Սրբ. Հայրապետի տօնը, ցանկացաւ Ն. Սրբութեան բարեբաստ օրեր, ընդ երկար հովանաւորելու Մ. Աթոռի լուսաւորութեան Կենտրոնը։

Ն. Վեհափառութիւնը յորդորեց ուսուցչական մարմնին համերաշխ գործակցութեամբ, եռանդով և սիրով տանել իրենց յանձնուած պատուաւոր, սակայն պատասխանատու գործը՝ աշխատելով ներշնչել մանուկ սերնդին սէր դէպի Հայրենի Եկեղեցին, նորա սրբութիւնները, անցեալի ժառանգութեան վերաբերուել յարգանօք, որ ապագայի լաւագոյն գործառնութեան հիմքերը պիտի կազմեն մատաղ և կազմակերպուող ողիների մէջ։

* *
*

Ժամը 1-ին, Ն. Սրբութիւնը, ըստ հրաւէրի Ճեմարանի հ. Տեսչի, հաճեցաւ իջնել Վեհարանից և շրջապատուած Միաբանական Ութսի անդամներով, նոցա առաջնորդութեամբ անցաւ Ճեմարան, որի մուտքի առաջ ընդունեց Ն. Սրբութեան Ճեմարանի Վարչական կազմը։

Ճեմարանի հիւսիսային կողմը զարդարուած էր տարեկան հանդիսի համար։ Գլխաւոր մուտքի կամարի մէջ զետեղած էր Հիմնադրի մեծադիր իւղանկար նկարը, զարդարուած ծաղիկների և կանաչի դրասանդներով, որ գալիս իջնում և գալարուում էին սիւների շուրջը։ Հրապարակ-սալահատակի մէջ տեղը, կարմիր մահուդի վերայ առած, դորգերի վերայ դրուած էր Հայրապետական Գա-

հոյքը բարձրաղիր պատուանդանի վերայ։ Գահի երկու կողմը շարուած էին բազկաթոռներ միաբանական ուխտի և աթոռներ հասարակութեան ներկայացուցիչների և հանդիսականների համար։

Ն. Սրբութիւնը գահ բազմելով երգեցիկ խումբը երգեց «Քաջամարտիկ» շարականը, որից յետոյ Ճեմարանի հ. Տեսուչը կարդաց հասարակութեան առաջ նախորդ երկու տարուայ, 1914/15 և 1915/16 ուսուցչ. տարիների ընդարձակ տեղեկագիրը, մանրամասն կանգ առնելով անցեալ տարիների՝ նախորդի ուսման կեանքի և վերջնորդի Ճեմարանը մի տարով փակ պահելու պարագաների վերայ։

Տեղեկագիրը «Արարատ»ի մէջ հրատարակուելու պատճառով, մանրամասնութիւնները այնտեղ կարելի է տեսնել։

Այնուհետև հանդէսը շարունակուեցաւ հետևեալ կարգով։

1. Օրհներգ Հայրապետական .	Քառաձայն խումբը
2. Երկու փոթորիկ (ոտ. Ալ. Մատուրեանի)	աշ. Բ. դ. Տէր-Յովհաննիսեան Վաղարշակ .
3. Կեանքս դալար (ոտ. Ա. Իսահակեանի)	ուս. Ա. լս. Տէր-Երեմեան Գուրգէն
4. Քեզի մեռնիմ (երգ) . .	Խումբը.
5. Բանախօսութիւն . .	-պ. Ե. Հայրապետեան
6. Մովուն (ոտ. Ա. Զոպանեանի)	աշ. Դ. դ. Վարդանեան Սեդրակ
7. Մեր Նախնիքը (երգ) . .	Խումբը
8. Ճանաչում էք (ինքնուրոյն ոտ.)	ուս. Բ. լս. Գրիգորեան Դանիէլ
9. Մենք ուխտ ունենք (ոտ. Յ. Թումանեանի	աշ. Դ. դ. Յարութիւնեան Եղիշէ
10. Զէյթունցիներ (երգ) . .	Խումբը

Գեղեցիկ տպաւորութիւն թողեց Բ. լսարանի ուսանող Գրիգորեան Դանիէլի ինքնուրոյն՝ բզկթուած Հայութեան և նորա խեղճ ցին ու ուրուրների բաժին դարձած

Հայրենիքին նուիրուած բանաստեղծութիւնը, որ ընթերցողը կգտնէ «Արարատ»ի այս համարում։

Հանդէսը վերջացաւ Վեհ. Հայրապետի «Պահպանիչ»ով։ Միաբանութեան անդամների, ճեմարանի հ. Տեսչի և ուսուցչական մարմնի առաջնորդութեամբ Վեհ. Հայրապետը թողեց հանդիսավայրը, նախապէս օրհնելով ճեմարանի հիմնադրի յիշատակը, ուսուցիչներին, և աշակերտութիւնը և անցաւ Մայրավանքը։

* * *

Նորին Սրբութեան հաճելի եղաւ իւր անուանակոչութեան Տօնի առթիւ իւր հետ սեղանակից լինելու հրաւիրել Մ. Աթոռի Միաբանութեան անդամներից և եկող պատգամաւորներից մի քանիսին միայն, որովհետև Երևանից եկած պատգամաւոր հիւրերը ներողութիւն խնդրելով Ն. Սրբութիւնից վաղօրօք մեկնել էին։

* * *

Ն. Սրբութեան Անուանակոչութեան առթիւ Հայութեան ամէն վայրերից բազմաթիւ հեռագրական շնորհակալութիւններով իւր հօտերի բոլոր խաւերն շտապել էին իրենց որդիական սէրն ու յարգանքը մատուցանել Ազգիս Վեհ. Հայրապետին, որոնց մէջ մտնում են թեմական Առաջնորդներ, Փոխանորդներ, քահանայական դաս, համայնքներ, ընկերութիւններ, անհատներ, դպրոցական մարմիններ, աշակերտութիւն, այլ և բազմաթիւ պաշտօնական օտարազգիք։

Ն. Վեհափառութեան Դիւանի կողմից ամենքին ևս յայտնուեցաւ Ն. Սրբութեան օրհնութիւնը և շնորհակալիքը։

* * *

Երեկոյեան ոչ վանքի բակում և ոչ ճեմարանում հրավառութիւն և զբօսանք չկար։ Այդպիսի զուարճութիւնների օրեր և տարի չէր այս դժբաղդութեան մեծ տարին, երբ հազարաւոր արիւնակիցներ վշտի ու տառապանքի խաչն են կրում իրենց անզօր ուսերի վե-

բայ, երբ Հայութիւնը արիւնքամ է եղած և հարիւր հազարաւոր դիակների չարատանջ մահուան հրեշտակն է սաւառնում մեր շուրջը,— այսպիսի արեան ու արցունքի օրերին, բնական է, որ զուարճութեան մասը պիտի բոլորովին բացակայէր և Վեհ. Տօնապետի և Հոգևոր Ճեմարանի համար։

Երեկոյեան ճեմարանը, իւր զուտ ընտանեկան կեանքն էր ապրում, խմբուած ի միասին, վերյիշելով անցեալի, քառասուն և երկու տարուայ կեանքը և յուսով ու հաւատով թեւակոխելով իւր քառասուն և երրորդ տարին։

* *
*

Ն. Սրբութիւնը սեպտ. 29-ին, առաւօտեան, բարեհաճեց մեկնել Երևան, ուղեկցութեամբ իւր Դիւանապետ Տ. Տիրայր ծ. վարդապետի և Մ. Աթոռի Գանձապահ Տ. Վրթանէս վարդապետի։

Փարաքար գիւղում, Ն. Սրբութեան ընդ առաջ էր եկել Երևանի Փոխ թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսը, որը և ընդունեց Նորան գիւղի հասարակութեան ներկայացուցիչների հետ, որոնք Վեհ. Հայրապետին աղ ու հաց մատուցին։ Դպրոցի առաջ խմբուած աշակերտութիւնը Ն. Սրբութեանն ընդունեց երգեցողութեամբ։

Ն. Սրբութիւնը օրհնելով իւր օրհնութիւնը խնդրող ներկայացուցիչներին և գումարուած ժողովրդին մեկնեց Երևան։

Փարաքար էր եկած ընդ առաջ նաև Երևանի ոստիկանապետը։

* *
*

Երևանի այգիների մօտ ընդ առաջ էին եկել Ն. Սրբութեան քաղաքից պատգամաւորները, բազմաթիւ կառքերով և Ն. Սրբութիւնը շրջապատուած իւր հետզհետէ աւելացող հետևորդներով մտաւ քաղաք։

Առաջնորդական ս. Սարգիս եկեղեցու առաջ կանգ առնելով Վեհ. Հայրապետի փակ կառքը, Ն. Սրբութիւնը հաճեց Եկեղեցի մտնել, իրեն ընդ առաջ ելած շրջա-

ռազգեստ քահանայական դասի և եկեղեցականութեան առաջնորդութեամբ, «Հրաշափառ» շարականի երգակցութեամբ։

«Ուրախ եղէ» սաղմոսի արտասանութիւնից և կարճ աղօթքից յետոյ, Վեհ. Հայրապետը դարձաւ Եկեղեցում ժողովուած երկսեռ բազմաթիւ աղօթաւոր ընդունողներին կարճ խօսքով, յայտնելով, որ Իւր համար ամենևին ցանկալի չէր զրկել իւր ժողովրդին աշխատանքի օրը աշխատանքի պարտաւորութիւնից և անհրաժեշտութիւնից, սակայն, ուրախ է, որ տեսնում է այսքան մեծ բազմութիւն, որ եկել է իւր սիրոյ և յարգանքի զգացումները մատուցանելու իւր Հայրապետին, որ նոցա Ջերմեռանդութեան արդասիքն է, ինչպէս և սիրոյ առհաւատչեան դէպի իւր ս. Եկեղեցին և նորա Քահանայապետը։ Օրհնում է ամենքին, աղօթելով Տիրոջը զօրացնել իւր ժողովրդի հաւատն ու սէրը դէպի իւր սրբութիւնները և դէպի Մ. Աթոռն ու նորա Գահակալները։

Եկեղեցուց դուրս գալով դիմեց դէպի առաջնորդարան, անցնելով երկշար կանգնած դպրոցական աշակերտութեան, Որբանոցների ապաստան գտած որբուկների միջոցով, որոնք տեղ էին բռնել եկեղեցու դռնից մինչև առաջնորդարանի գաւթի սանդուղտները։ Աշակերտներն ու աշակերտուհիները ծաղիկներ և թարմ կանաչ ու ստեր էին փռում Ն. Սրբութեան ուղեգիծ կազմող զորքերի և կարմիր մահուդի վերայ։

Ն. Սրբութեան ամպհովանին կրում էին, թուրք հասարակութեան ներկայացուցիչ, Երևանի նախկին տիրապետող խանների սերունդ՝ Աղա-խան և քաղաքագլխի պաշտօնակատար պ. պ. Արամ Բունիաթեան, Վասիլ Եղիազարեան ու Յովհ. Մելիքեան։

Վեհ. Հայրապետը մտնելով առաջնորդարան օրհնեց ամենքին և մտաւ կարճ ժամանակով Իւր առանձնասենեակը։

* * *

Մինչև Ն. Սրբութեան դահլիճ մտնելն այնտեղ տեղ էին բռնել Երևանի հասարակութեան բազմաթիւ ներկայացուցիչները, ազգի և սեռի խտրութեան։

Ներկայ էր թուրք հասարակութեան կողմից Հոգևոր կառավարութեան Ատենապետ Ղազին՝ իւր երկու օգնականով, նախկին սարդարների շառաւիղ Աղա-խան Երևանսկին և պատուաւոր վաճառականներից մի քանի հոգի, հայ հասարակական գործիչներ, դպրոցական և որբանոցային ընկերութիւնների մարմիններ և ներկայացուցիչ տիկիններ, օրիորդներ և պարոններ։

Ամբողջ Առաջնորդարանը զարդարուած էր բազմաթիւ գորգերով, թարմ կանաչով, դրօշակներով։ Նեղը՝ դահլիճի ծայրը դրուած էր Հայրապետական Գահը, որի տակ փռուած էր Երևանի գաղթականական արհեստանոցի արդիւնք մի փոքրիկ գեղեցիկ գորգ և սպիտակ թաղիքից պատրաստուած, ճաշակով զարդարուած ոտքի տակի մի փռոցք։

* *
*

Վեհ. Հայրապետը մի քանի րոպէ հանգստանալուց յետոյ հաճեց ընդունել Ղազիին և իւր երկու օգնականին և Աղա-խան Երևանսկուն։

Ղազին շնորհաւորեց Ն. Սրբութեան մուտքը Երևան և թէ իւր օգնականների, և թէ Երևանի թուրք հասարակութեան կողմից խնդակցութիւն յայտնեց Ս. Էջմիածնի Մեծ-Խալիֆային քաջառողջ տեսնելով։ «Ս. Էջմիածինը, ասաց Ղազին, և իւր Գահակալները միշտ առանձին հոգածութեամբ են վերաբերուել անցեալում դէպի միւսիւլման հասարակութիւնը և յարգանքով դէպի նորա բոլոր ներկայացուցիչները։ Ուրախ ենք, որ ժամանակը այդ բարի ու յարգական յարաբերութիւններն աւելի ևս ջերմացրել ու մտերիմ են դարձրել և ինքը ուրախ է յայտնելու, որ Երևանի միւսիւլման հասարակութիւնը ևս նոյն զգացումներն է տածում դէպի իւր հարևան հայ ժողովուրդը, դէպի Մ. Աթոռը և նորա Մեծ-Խալիֆան, որին կրկին և կրկին իւր ողջոյններն է մատուցանում»։

Վեհ. Հայրապետը իւր շնորհակալութիւնը յայտնելով Ղազիին, իւր օգնականներին և հասարակութեան ներկայացուցիչ Աղա-խանին, յայտնեց հատ գոհ «միւսիւլման հասարակութեան հոգևոր և աշխարհիկ ներ«կայացուցիչներից լսելու այն բարձր գնահատական զգա«ցումների մասին, որ ունեն նոքա դէպի Հայ ազգի սրբա«վայր Կենտրոնը և նորա Գահակալները։ Առաւել ևս «հաճելի է իմ համար լսել համերկրացիական այն զգա«ցումների արտայայտութիւնը, որ մեր հարևան թուրք «ազգաբնակցութիւնը տածում է իւր տարակրօն և այլա«սեռ եղբայր Հայերը։ Այդ զգացումները գնահատում եմ, և յորդորում միշտ նոյնը քարոզել «և սերմանել Ձեր ժողովրդի սրտերում։ Աստուած իւր «արևն ու լոյսը համահաւասար չափով է սփռում իւր բո«լոր ստեղծուածների վերայ։ Տիրոջ այդ մեծ և բարի «օրինակը խրատական թող լինի Նորա սիրոյ Ջերմութեան «տակ բաղդակից միւսիւլմանների և հայերի համար, միա«համուռ ոյժերով ձգտելու երկրի բարօրութեան և խաղաղ «քաղաքակրթական յառաջադիմութեան գործում։

Իմ ողջոյնները յայտնեցէք և իմ օրհնութիւնը տուէք «Ձեր ժողովրդին և ազգակիցներին»։

Ղազին և իւր ընկերները Վեհ. Հայրապետի առաջարկութեամբ նստեցին և 10 րոպէի չափ ունկնդրութիւն ունեցին։

* *
*

Ն. Սրբութեան ներկայացան այնուհետև շրջանային Դատարանի դատախազ Վլադիմիր Պլատոնովիչ Գիրշենկո, Երևանի գիմնազիայի տեսուչ Եւգինիյ Ալէք. Զօկաշվիլի, ուսուցչական սեմինարիայի և բ. օրիորդաց գիմնազիայի տեսուչ Վալենտին Վասիլ. Դոբրոտին։

* *
*

Երևանի Նահանգապետի բացակայութեան պատճառով Ն. Վեհափառութեան այցի եկաւ փոխ-Նահանգապետ Ալէքսանդր Դաւիդովիչ Պանջուլիձեւ, որին Ն. Սրբութիւնն ընդունեց առանձին ունկնդրութեամբ։

Այնուհետև ներկայացան Քաղաքային Վարչութեան կողմից, քաղաքագլխի բացակայութեան պատճառով, քաղաքագլխի-պաշտօնակատար Արամ Բունիաթեան, քաղաքային Վարչութեան անդամ Արմենակ Աւետիքեան, փոստային Վարչութեան կողմից պ. Պետրոսեան, Նահանգապետի Դիւանի կառավարիչ Անատոլիյ Միխ. Դամասկին, Արքունի Պալատի Կառավարիչ Նիկոլայ Նիկոլ. Օգուրով, Նահանգապետի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ պ. Մուշեղեան։

* * *

Որբախնամ ընկերութիւնների Վարչութեան նախագահը և անդամուհիներն արժանացան Ն. Վեհափառութեան առանձին ունկնդրութեան, որոնց Ն. Սրբութիւնը օրհնելով իրենց ցոյց տուած ջանքերի և խնամածութեան համար, յորդորեց առաւել ևս սիրով հոգ տանել իրենց խնամքին յանձնուած որբերին։

* * *

Երևանի հասարակութեան կողմից ընտրուած ընդունելութեան Յանձնաժողովի անդամներ, պ. պ. Վասիլ Եղիազարեան, Գրիգոր Տ. Խաչատրեան, Գաբրիէլ Մնացականեան, Գէորգ Խանազատեան, Յովհաննէս Մելիքեան, Լևոն Մուշեղեան, Մարտիրոս Դաւթեան, Թ. Տօշեան Ռուբէն Աֆրիկեան, Երուանդ Գէորգեան ներկայանալով Ն. Վեհափառութեան շնորհաբեր գալուստ մաղթեցին Ն. Սրբութեան և խնդրեցին մի քանի օրով հաճել հիւր լինել Երևանի հայ հասարակութեան, որ վաղուց ի վեր սպասում է իւր Վեհափառ թեմակալին իրենց շրջանում տեսնել։

Ն. Վեհափառութիւնը իւր շնորհակալիքը յայտնելով եղած ընդունելութեան համար, յայտնեց միաժամանակ որ անկարող պիտի լինի ընդունել հասարակութեան ջերմ ցանկութիւնը, չնայելով որ իւր համար, անձնապէս, շատ և շատ ցանկալի պիտի լինէր ի մօտոյ ծանօթանալ այն բազմաթիւ կարիքների հետ, որ ունի Երևանի թեմը, աշխա-

տելու, ըստ հնարաւորութեան, դարման տանել այն կարիքները լցուցանելու, քանի որ Մ. Աթոռից երկար բացակայելու հնարաւորութիւն չունի և իւր անմիջական պարտիքը ստիպում են վաղն ինք վերադառնալ Ս. Էջմիածին։ Մի այլ ժամանակ, յարեց Ն. Սրբութիւնը, ուրախութեամբ աւելի երկար կմնամ Ձեզ մօտ։

* *
*

Ն. Սրբութեան բաղդ ունեցան առանձին ներկայանալու բժ. Յովհաննէս Յովհաննիսեան և Առաքել-աղա Աֆրիկեան, որոնք մնացին Ն. Վեհափառութեան մօտ շուրջ 10 րոպէ։

* *
*

Ժամը 1-ին Ն. Սրբութեան ներկայանալու արժանացրէց Ցանահ-խանի որդի Ալի-խան Մակինսկիյ, որին Ն. Վեհափառութիւնն ընդունեց առանձին ունկդրութեամբ։

***

Երեկոյեան ժամը 5½-ին Ն. Սրբութեան ներկայացրեց Ցանահ-խան Մակինսկիյ 80-ամեայ ծերունին, որին Ն. Սրբութիւնն ընդունեց իւր առանձնասենեակում և ունկնդրութիւնը տևեց մօտ 40 րոպէ։

Ցանահ-խանը ողջունեց Ն. Սրբութեան բարի գալուստը Երևան և իւր ջերմ ցաւակցութիւնը յայտնեց, որ հիւանդութեան պատճառով անկարող էր եղած առաւօտեան ընդ առաջ գալ Ն. Սրբութեան։ Դա իւր արքայական պարտքն էր, — յարեց խանը, — «որովհետև իմ նախնիքներից ենք սովորած ամենամեծ յարգանքով վերաբերուել դէպի Ս. Էջմիածնի Մայրավանքը և նորա գահակալ Մեծ-խալիֆաները, նոյնը և միշտ կատարելով, յորդորել եմ իմ ցեղակիցներին և հաւատակիցներին միշտ ի նկատի ունենալ և գործադրել»։

Ն. Սրբութիւնը իւր շնորհակալութիւն յայտնեց խանին իւր զգացումների համար, որ պատիւ է բերում իրեն, իբրև մեծ օջախի տերնդի և յորդորեց նոյն ոգով կրթել և իւր որդուն և նորա զաւակներին, որով համերաշխութեան

գործը գլուխ գալու նպաստած կլինին մեծերը, որոնց օրինակին է հետևել և հետևում միւսիւլման ժողովուրդը։

Ապա Ն. Սրբութիւնը հիւրասիրեցէ խանին թէյով, որի ժամանակ վերյիշումներ տեղի ունեցան Ցանահ-խանի կողմից այն ծառայութեան մասին, որ կատարել էր իւր պապ Ահմէտ-խանը Պարսից արշաւանքի ժամանակ, հրամայելով շրջապատել Էջմիածինը, իրրև Հայոց Սրբավայր և միւսիւլմանների համար իսկ յարգուած սրբավայր։ Ինչպէս իւր հօր, Սիւլէյման-խանի և ներսէս Մեծ-Խալիֆայի մէջ բարեկամական և բարեացակամ յարաբերութիւններ էին ստեղծուած, որով երկրի խաղաղութիւնն էր պահպանւում երկու հարևան, այլասեռ, բայց բաղդակից ազգութիւնների մէջ. նաև իւր անձնական ծառայութիւնները Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ, ինչպէս և այլ դէպքերում, ի նկատ ունենալով միայն համակրացիական բարի կապերի պահպանութիւնը։ „Նոյն ոգով, — ասաց խանը, — կրթում եմ և իմ որդուն, Ալի-խանին, և գիտեմ որ այդ նկատմամբ միւսիւլման ժողովուրդը միայն օգուտ ունի։"

Ն. Վեհափառութիւնը գովեց նրա այդ բարեմիտ վերաբերմունքը, յորդորելով առաւել լայն խաւերի մէջ ընդհանրացնել համագործակցական, իրար յարգելու, միմեանց իրաւունքները ճանաչելու, և արդարութեան ու իրաւախոհութեան ճանապարհով ընթանալու օգուտները ուղղ ակզբունքները։

Ցանահ-խանը հեռացաւ շատ գոհ սրտով և մխիթարուած իւր այցի եկքով։

* * *

Ն. Սրբութեան ներկայացաւ Երևանի Ռուս հոգևորականութեան կողմից, Ծերունի, Երևանի բարեկարգիչը, ներողութիւն խնդրելով, որ չէ կարողացել իւր որդիական պարտքը կատարել աւելի կանուխ, որովհետև հիւանդոտ է և գործերով ծանրաբեռնուած։

Ընդունելութիւնը տևեց մօտ 10 րոպէ։

* * *

(գոյշքի)

Նոյն օրը, սեպտ. 29-ին, Տփխիսից Երևան էր ժամանած Ն. Գայծառափայլութիւն Կոմս Վլադիմիր Նիկոլաևիչ Կոկովցևը, որին Ն. Սրբութեան պատուէրով այցելութեան և բարի գալուստ մաղթելու գնացին Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս և Հայրապետական Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետ, երեկոյեան ժամը 10-ին։

Կոմսը սիրով ընդունեց Ն. Սրբութեան ներկայացուցիչներին և ի պատասխան Հայրապետական բարի-գալուստ մաղթի, իւր ջերմ շնորհակալիքը յայտնեց և խնդրեց հաղորդել այդ մասին Ն. Սրբութեան դէպի ինքը տածած ուշադրութեան համար։

Կոմսը շատ գոհ էր իւր կատարած ճանապարհորդութիւնից, սքանչացած էր Սևանի լճի զգլխիչ գեղեցկութեամբ, ինչպէս և առհասարակ ամբողջ Կովկասի՝ մէկը միւսին գերազանցող գեղեցկութիւններով և զմայլելի վայրերով։ «Շատ ուրախ եմ, յարեց կոմսը՝ որ կեանքիս աւրևմուտքին, գոնէ, կարողացայ ճաշակել Տիրոջ պարգևած այդ հոգեզմայլ տեսարաններն և սիրել Կովկասը»։ Ցաւեց, որ շատ կարճ ժամանակով է օգտուում այս ամենից, որով պաշտօնի պարտաւորութիւններն ստիպում են նորան շուտով Պետրոգրադ վերադառնալ։

Ապա հետաքրքրուեցաւ գաղթականական գործով, պարենաւորման եղանակով, իւր ջերմ ցաւակցութիւնը յայտնեց անցեալ տարի Էջմիածնի շուրջը հազարաւոր զոհեր տուած Հայութեան և առհասարակ նորան հասած ծանր օրերի և կորուստների համար։

Կրկին և կրկին շնորհակալութիւն յայտնելով, յարեց, որ ինքը վաղը շատ կանուխ պիտի ճանապարհ ընկնէ, ժամը 6-ին, սակայն իւր պարտքը կը համարէ առ Ն. Սրբութիւնը պարտավճար լինել։

Ընդունելութիւնը տևեց մօտ 20 րոպէ։

Սեպտ. 30-ին, առաւօտեան ժամը 8³/₄-ին Նորին Պայծառափայլութիւն Կոմս Վլադիմիր Նիկոլաևիչ Կոկովցևը փոխ այցելութեան եկաւ Ն. Սրբութեան։

* * *

Ժամը 10-ին Ն. Սրբութեան ներկայացան Երևանի թեմակ. դպրանոցի ուսուցիչները, դպրանոցի տեսուչ պ. Սրշ. Զիլինկարեանի առաջնորդութեամբ։

Ն. Սրբութիւնն ընդունելով ուսուցչական խումբը յորդորեց համերաշխ գործակցութեամբ գլուխ հանել իրենց վերայ դրուած պարտիքը և աշխատել բարի լինել դէպի աշակերտութիւնը, որովհետև շատ չարիք վերանում է ուսուցչի այդ վերաբերմունքով և աշակերտութիւնն այդ միջոցներով աւելի սիրով է կապւում իւր պարապմունքներին և իւր դպրոցին։

* * *

Ժամը 11-ին Ն. Սրբութեան ներկայացաւ Ուսուցչական Միութեան Երևանի ճիւղի վարչական կազմը, որի նախագահ պ. Նիկողայոսեան շնորհաւորելով Ն. Սրբութեան գալուստը նորա բարձր ուշադրութիւնը հրաւիրեց իրենց ծանր կացութեան վերայ, որով ուսուցչական մարմինը գիւղերում և քաղաքներում նիւթական նեղ դրութեան մէջ է գտնւում և որ ամենից աւելի ցաւալին է, Հոգաբարձութիւնն իրենց ծանր կացութիւնը փոխանակ բարւոքելու, ուսուցիչների առաջ դպրոցի դռները է փակում։

Ներկայ գտնուող փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսը բացատրեց, որ Տփխիսի Ուսուցչական Միութեան Ն. Վեհափառութեան ներկայացրած խնդիրը, ըստ պատուէրի Ն. Սրբութեան, առանձին քննութեան խնդիր դարձած լինելով յատուկ Յանձնաժողովի կողմից, որին մատնակցում էր և ինքը, Տփխիսում, ցանկալի էր համարուել, որ ուսուցիչների այժմեան ստացած թոշակի քանակը 30—40%-ով բարձրանայ։ Վերադառնալով իւր թեմը շատ աւելի վաղ, քան Երևանի ուսուցչական միութեան կողմից

խնդիր էր յարուցած, շրջաբերականով կարգադրել է, յանուն Հոգաբարձուների, աւելացնել դասագինը՝ գիւղերում 30, իսկ քաղաքներում 40%, իսկ աւելին՝ որտեղ հնարաւոր է: Այս դրութեամբ, այժմ գիւղական ուսուցիչը, փոխանակ նախկին 300—400 ռ. ստանում է 600 ռ., իսկ քաղաքներում մինչև 1000 ռ.: Եւ այժմ Երևանի Ուսուցչ. Միութեան վարչութիւնը փոխանակ գոհ լինելու և անմիջապէս սկսելու դպրոցական կեանքը, ինչ որ նկատումներով, դասադուլ է հրատարակել, «բոյկոտ» է կազմել մեր դպրոցների դէմ և հոգաբարձուների անհնարին կացութիւնը թշնամական դրութիւն յայտարարում ուսուցչութեան դէմ:

Վեհ. Հայրապետը Ուսուցչական Միութեան Երևանի ճիւղի այդպիսի վարմունքի մէջ ոչ մի հիմք չ'տեսնելով, յորդորեց նորանոր դժուարութիւններ չյարուցանել, բաւականանալ հոգաբարձութեան կազմերի յաւելումներով և գործի ձեռնարկել: «Անհասկանալի է, ինձ համար, յարեց Ն. Վեհափառութիւնը, որ Հայ ուսուցչական մարմինը «բոյկոտ» է հրատարակում Հայ դպրոցի դէմ, փոխանակ ամէն ջանք, միջոցներ և անձնուիրութիւն դնելու դպրոցների թիւը ստուարացնելու փոխանակ՝ փողոցի մէջ և ոչ-ցանկալի միջավայրում վխտացող մեր փոքրիկներին դպրոցական կեանքի հրաւիրելու, Հայ ուսուցչական մարմինը և նորա ղեկավար-վարչութիւնը դպրոցական կեանք տեսած մանուկներին ևս իւր ձեռքով նոյն փողոցն է նետում և անբարոյ միջավայրի ոչ-ցանկալի տարերն աւելի ևս շատացնում: Այս գործը նախկին շրջանի, դաղափարական ուսուցիչների սերունդ մեր նոր ուսուցչական միութեան պատիւ բերել չէ կարող: Ցաւալի է լսել, որ այժմեան ուսուցչական մարմինը դպրոցական կեանքի վերայ նայում է շահի և օգտաւէտութեան տեսակէտից: Ցաւ է ինձ համար, որ Հայ ուսուցչի նիւթականը սուղ է, որ նորա տկար ոյժերը կատարելապէս չեն կազդուրուում, դորա համար ամէն հնարաւոր միջոցներ ձեռք կառնուին՝ բարուրքելու նոցա դրութիւնը, սակայն «բոյկոտ» Հայ դպրոցի

դէմ, դա՝ ցաւալի երևոյթ է»։ Եւ կրկին ու կրկին յորդորեց զգաստանալ և գործի կպչել։

* *
*

Ժամը 12½-ին Ներկայացաւ Հայ ուսուցչութիւնը, գլխաւորութեամբ թեմական տեսուչ պ. Թ. Խզմալեանի։

Ն. Սրբութիւնը յորդորեց ուսուցչական մարմնին միշտ մնալ իւր կոչման բարձրութեան վերայ, լինել ճշմարիտ և անկեղծ բարեկամ հայ մանուկ սերնդի, սերմանելով նոցա անկերպարան հոգու և մատաղ սրտի մէջ սէր դէպի իւր լեզուն, կրօնը, իւր հայրենի սրբութիւնը՝ գրականութիւնը և գիտութիւնները, յարգանք դէպի օտարը և օտարինը, որպէս զի ապագայ սերունդը գիտակից տարր լինի մեր քաղաքակրթական ուղու վերայ։ Յորդորեց թեմական տեսչին ի մօտոյ հսկողութիւն ունենալ դպրոցական կեանքի վերայ, թերին լրացնել, լաւագոյնը պատուաստել, կարիքների մասին խորհրդակցել փոխ-թեմական հեսուս ուսուցչական կազմակերպութիւնների շրջաններում և կարևոր դէպքում Ս. Էջմիածնի Ուսումն. Յանձնաժողովին զեկուցանել, որպէս զի մեր դպրոցական կեանքը կայուն և արդիւնաւոր լինի։

III

Երևանի պարտքից ներողություն տալը

Դեկտ. 30-ին 12¾-ին Ն. Սրբութեան Ներկայացավ Երևանի Գարեգին Նոր կաթուղիկոս Միրզա Ասադուլլահ-խանն։ Նորին Սրբութիւնը շնորհեց նորան առանձին ունկնդրութիւն։

Ասադուլլահ-խանը ողջունեց նորին Վեհափառութեան հետևեալ խօսքերով.

«Բաղդաւոր եմ զգում ինձ, որ հնարաւորութիւն «ունիմ ողջունելու յանձին Ձեր՝ Հայ ազգի հոգևոր քա«ղաքակրթութեան բարձրագոյն ներկայացուցչին։ Իմ Նոր «պաշտօնավայրս մեկնելու ժամանակ, իմ Կառավարու«թիւնից յատուկ հրահանգ ունիմ անձամբ ներկայանալ «Ձերդ Սրբութեան և շնորհաւորելու իմ կառավարու«թեան կողմից, ցանկալով Ձեզ անձնապէս և Ձեր բազմա«թիւ հօտին բարեբաստիկ կեանք և յառաջադիմութիւն։

«Հայ և պարսիկ ժողովրդի քաղաքակրթական ուղիները «միևնոյն հայրենիքի և հողի վերայ է զարգացել դարերի «ընթացքում և այսօր էլ, եթէ բաղդը յաջողէ, որ նոքա «նախկինի պէս շարունակեն ձեռք ձեռքի տուած գործել «հանրական օգտի համար, ապա պէտք է ենթադրենք, որ «նոցա քաղաքակրթական մերձեցումն էլ արագ քայլերով «կը յառաջանայ և զօրեղ արձագանք կը գտնէ երկու ազ- «գերի մտաւոր գործիչների սրտերում։ Այս տեսակէտ- «ներով Ձերդ Սրբութեան օրհնութիւնը հայցելով իմ «հայազգի հայրենակիցների վերայ, մեծ յոյս ունիմ, որ «Ձեր սուրբ աղօթքներով և Տիրոջ օգնութեամբ երկու «համերկրացի ազգերի բարեկամական յարաբերութիւն- «ները մշակելու գործի նկատմամբ մեծ և օգտակար հե- «տևանքների պիտի յանգենք»։

Նորին Վեհափառութիւնը իւր գոհունակութիւնը յայտնեց Աստուածահաճոյ Խանին իւր տեսակցութեան համար, առաւել ևս այն զգացումների համար, որով նորա երի- տասարդ սիրտն է զեղուն։ «Համերաշխութեան և համա- «գործակցութեան սկզբունքները, յարեցին. Սրբութիւնը, «այն առողջ ազդակներն են, որոնք երկու բաղտակից ազ- «գերի քաղաքակրթութեան գործի ուսհվիրան պիտի «դառնան։ Այդ ազդակները, գիտակից ղեկավարների օժան- «դակութեամբ հաւասարապէս բարերաղդ վիճակ պիտի «ստեղծեն թէ Հայ ժողովրդիս համար և թէ Պարսից դա- «րաւոր քաղաքակրթութեամբ օժտուած ազգի համար, «որոնք Եւրոպական քաղաքակրթութեամբ զինուած առա- «ւել ևս պիտի գնահատեն համերաշխ գործակցութեան «սկզբունքը։ Ուրախ եմ, որ իմ ժողովրդի համար այս- «պիսի բարեբաստիկ ապագայի խորհրդով է տարուած «Ձեր Կառավարութիւնը որին իմ շնորհակալութիւնս եմ «յայտնում, և նորա ղեկավար գաղափարների պաշտօնեա- «ները, որոնցից մէկին եմ տեսնում յանձին Ձեր»։

Ունկնդրութիւնը տևեց 15 րոպէ, որի ժամանակ երիտասարդ Աստուածահաճոյ Խանը արտօնութիւն խնդրեց այցելելու Մ. Աթոռ և այնտեղ կրկին իւր յարգանքները

մասուցանել Հայոց Մեծ-Խալիֆային և աղօթել նոցա Մեծ սրբավայրում։

Ն. Սրբութիւնը հրաւիրեց Հնորան Մ. Աթոռ ըստ առաջին պատեհութեան։

* * *

Ժամը 1-ին ներկայացան Վանի գաղթականական զանազան մարմինների կազմութիւնների կողմից մի պատգամաւորութիւն, խնդրելով Ն. Սրբութեան աջակցութիւնը մի քանի անհրաժեշտ խնդիրների ի մօտոյ լուծման մասին։

Ն. Վեհափառութիւնը յուսադրեց նոցա կարգադրելու նոցա խնդիրները ըստ հնարաւորութեան և յարմարութեան։

* * *

Ն. Վեհափառութեան կողմից ներկայացող անձերին փոխ-այցելութեան գնացին Երևանի Փոխ-թեմական Գեր. Տ. Խորէն եպիսկոպոս և Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետ։

* * *

Նորին Սրբութիւնը ամսոյս 30-ին իւր հետևորդների հետ Մ. Աթոռ ուղևորուեցաւ։

Ն. Սրբութեան ճանապարհ ընկնելուց առաջ ողջերթի էին եկել քաղաքի հասարակութեան զանազան ներկայացուցիչները, որոնց ամենքին օրհնելով Ն. Սրբութիւնը կառք նստեց, շրջապատուած պահակներով և ոստիկանութեան ծառայողներով։

Երևանի այգիների մէջ Ն. Սրբութիւնը բարեհաճեց քաղաք վերադառնալու արտօնութիւն տալ իրեն հետևող քաղաքացիներին, քաղաքի ներկայացուցիչներին, ընդունելութեան Ցանձնախմբի անդամներին, Ոստիկանապետին և այլն։

Ժամը $5^1/_2$-ին Ն. Սրբութիւնը ժամանեց Մ. Աթոռ։

* * *

Ն. Վեհափառութիւնը տեղեկութիւն ստացած լինելով Ամերիկայի Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհուհուց և Վսեմափ. Պօղոս Նուբար փաշայից, որ Հոկտ. 21-ի օրը նուիրուած է Հայ տառապեալների օգտին ամբողջ Միացեալ Նահանգների մէջ կազմակերպուելիք հանգանակութեան գործին և որ այդ մեծ մարդասիրական գործի նախաձեռնութիւնը պատկանում է Միացեալ Նահանգների նախագահ Վիլսոնին և Ամերիկայի Միացեալ Նահանգների Մերակոյտին, ամսոյս 4-ին իւր գոհունակութիւնը և օրհնութիւնը յայտնեց Տ. Նախագահին, հետևեալ հեռագիրն ուղղելով նորան, ֆրանսերէն լեզուով։

«Միացեալ Նահանգների Տ. Նախագահ պարոն Վիլսոնին, ի Վաշինգտոն.

«Այժմ իսկ տեղեկացայ Ձերդ Գերազանցութեան, «ինչպէս և Միացեալ Նահանգների Մերակոյտի բարձր ու«շադրութեան մասին, դէպի իմ ժողովուրդը օրով արտո«նում էք նուիրել հոկտեմբեր 21-ի օրը ի նպաստ Հայերի «ընդհանուր ժողովրդութեան մեծ Հասարակապետու«թեան բոլոր Նահանգներում։

«Մարդասիրութեան այդ մեծ գործը իսկապէս յու«զեց ինձ և ես յայտնում եմ Ձեզ, պ. Նախագահ, իմ «սրտագեղ շնորհակալիքս Ձեր գթասրտութեան և բարե«ցակամ զգացումների համար, որ ցոյց տուիք դէպի ան«ծայր տանջանքի մատնուած մի ազգ։ Աղաչում եմ Ձեզ «իմ Աստուածային օրհնութիւնը, աղօթելով առ Աստուած՝ «Մեծ Հասարակապետութեան և Ամերիկայի ազնիւ ազգի «յառաջադիմութեան, ինչպէս և նորա ապագայական ազգ «կրող Նախագահի քաջառողջութեան համար։

ԳԷՈՐԳ Ե.

Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս ամենայն Հայոց»։

* * *

Հոկտ. 5-ին Ն. Կ. Մեծութեան ժառանգ Ն. Կ. Բարձրութիւն Մեծ-իշխան Ալէքսէյ Նիկոլաևիչի անուա-

նակոչութեան տօնի առթիւ մաղթանք կատարուեցաւ Մ. Աթոռում, որին ներկայ լինել հաճեցաւ Ն. Սրբութիւնը, ամբողջ միաբանական ուխտի և բազմաթիւ աղօթաւորների հետ։

Պատարագիչն էր Տ. Մատթէոս եպիսկոպոս։

* * *

Հոկտ. 8-ին Սրբոց Թարգմանչաց տօնի օրը, ըստ նախաւանդ սովորութեան միաբանութիւնը, ճեմարանի սաների հետ, ուխտի գնաց Օշական, Ս. Մեսրոպի գերեզմանին։

Օշականի եկեղեցում մատուցուեցաւ ա. Պատարագ։ Պատարագիչն էր Տ. Թադէոս վարդապետ։ Պատարագի ժամանակ երգում էր ճեմարանի երգիչների խումբը։

* * *

Նոյն երեկոյեան ի պատիւ Ս. Թարգմանիչների տեղի ունեցաւ ճեմարանում առաջին տարեկան գրական երեկոյթը։

Երեկոյթը իւր բարձր այցելութեամբ և ներկայութեամբ բարեհաճեց պատուել Ազգիս Վեհ. Հայրապետը, որ և մնաց մինչև հանդիսի վերջը։

Ն. Վեհափառութեան հրաւիրելու էր եկած ճեմարանի հ. Տեսուչ, Տ. Գարեգին ծ. վարդապետը։ Ն. Սրբութիւնը շրջապատուած Մ. Աթոռի միաբանական ուխտի անդամներով մտաւ ճեմարանի բակը, ուր՝ մեծ դռան առաջ բարձր Հիւրին ընդունելու պատիւ ունեցաւ ճեմարանի տեսչի օգնական պ. Ա. Տ. Պօղոսեան։

Ն. Սրբութեան, վերևի սրահի սանդուղքների գլխին սպասում էր ճեմարանի ուսուցչական կազմը, որ և առաջնորդեց Ն. Սրբութեան Հանդիսարան։ Դահլիճի վերին կողմը կարմիր մահուդի փռոցքի և գորգերի վերայ դրուած էր Գահ Հայրապետի համար։

Հանդէսն սկսուեցաւ ժամը $6^1/_2$-ին, Թարգմանչաց շարականով։ Ապա լսարանական բաժնի ուսուցիչ պ. Գ. Ղափանցեան կարդաց մի շատ հետաքրքրաշարժ և բովան-

դակալից զեկուցումն «Հայա-Արմենական լեզուախմբի ազգակցականութեան» մասին։

Հանդէսը շարունակուեցաւ հետևեալ բովանդակութեամբ.

«Դուէտ» Հերմանի—Նուագեցին մանդոլինայի վերայ I լսար. ուսանողներ՝ Գրիգորեան և Տէր-Առաքելեան.

Բանախօսութիւն, տօնի առթիւ—Մ. Սանթրոսեան ուս. II լսարանի.

«Ս. Մեսրովբ» — Սիմանթոյի — արտասանեց ուսուց. պ. Արշակ Տ. Յովսէփեան.

Նուագ — — դաշնակի վերայ, Գ. Սողոմոնեան, ուս. II լս.

«Եղիշէ» Պատկանեանի — Վ. Տ. Յովհաննիսեան, աշ. Բ. դաս.

Նուագ — — դաշնակի վերայ Արշ. Տ. Յովսէփեան, և մանդոլին՝ Գրիգորեան և Տ. Առաքել.

«Բերդիցը դուրս ելայ» — խումբը.

Բանաստեղծութ. ինքնուրոյն — Դ. Գրիգորեան, ուս. II լսարանի.

Նուագ — — Արշակ Տէր Յովսէփեան։

Հանդէսն անցաւ շատ աշխոյժ, հանդիսականներին մեծ գոհունակութիւն պատճառելով։

Ն. Վեհ. «Պահպանիչ»ով օրհնելով ամենքին իւր շնորհակալիքն ու օրհնութիւնը յայտնելով ճեմարանի վարչութեան և աշակերտութեան մեկնեց Վեհարան։

Հանդէսը վերջացաւ ժամը 7¾-ին։

* *
*

Հոկտ. 9-ին Տփխիսից Մ. Աթոռ ժամանեց դաղթականութեան Պարենաւորման գործի գլխ. Կարգադրիչ Գեն. Թամամշեանի օգնական պ. Լևոն Եւանգուլեանց, որին Ն.

Սրբութիւնը հաճեցաւ շնորհել առանձին ունկնդրութիւն։

Ապա Դիւանատանը խորհրդակցութիւն եղաւ գաղթականների դպրոցական, պարենաւորման, ձմեռուայ ապաստանարանների գործերի նկատմամբ։ Խորհրդակցութեան մասնակցում էին Գեր. Տ. Խորէն եպիսկոպոս, Տ. Տիրայր ծ. վարդապետ, Տ. Գէորգ վարդապետ՝ նախագահ Եղբ. Օգնութեան Յանձնաժողովի, և բժ. Մանդինեան Քաղաքների միութեան կողմից, իբրև լիազօր։

* *
*

Հոկտ. 11-ին Մ. Աթոռ ժամանեց Բաթումի աւագերէց Տ. Մեսրոպ ա. քհյ. Մելեան, որ ապրիլ ամսից ի վեր նշանակուած էր իբրև Հոգևոր իշխանութեան ներկայացուցիչ Տրապիզոն քաղաքի և նորա շրջակայի մէջ գտնուած Հայ Եկեղեցական կայքերի, ստացուածքի և կալուածների վերայ հսկողութիւն ունենալու և օտարացնելու դէմ միջոցներ ձեռք առնելու, ինչպէս և տեղական Հայութեան Ծացորդների հոգևոր պիտոյքները մատակարարելու համար։

Հ. Մելեանը ներկայանալով Ն. Սրբութեան զեկուցեց իւր կատարածների մասին և նոր հրահանգներ ստանալով Ն. Սրբութիւնից վերադարձաւ Բաթում, այնտեղից Տրապիզոն անցնելու։

Հայրապետական Դիւանից յանձնուեցաւ նորան մի մատեան, յանուն Տրապիզոնի Ս. Ստեփաննոս Եկեղեցու, ուր պիտի մուծուին կատարուած ծիսական գէպքերը, արձանագրելու ծնունդ ու մկրտութիւց, մահ, ամուսնութիւններ իւր հոգևոր հօտի։ Նորան յանձնուեցաւ նոյնպէս ել և մատից մատեան, որի մէջ պիտի մուծուին թէ Ս. Ստեփաննոս եկեղեցու և թէ Տրապիզոնի ու շրջակայքի բոլոր եկեղեցիների, եկեղեցական կալուածների, ազգային ստացուածների մուտք ու ելքը և տարեվերջը ներկայացնելի ի տես և ի տնօրենութիւն Ն. Վեհափառութեան, իբրև վերին հսկողի Հայ եկեղեցու ամբողջական շահերի և պաշտպանի։

Տիր. ծ. վր.